ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
"Էներգաարդյունավետությունը Հայաստանի համայնքներում"
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

Լոռու մարզ *"9" Ապրիլ 2018թ.*

Լոռու մարզպետարանը և "ԱՍԲԱ" հիմնադրամը, որը հանդիսանում է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող "ԵՄ-ն քաղաքացիական հասարակությանը. Էներգաարդյունավետությունը Հայաստանի համայնքներում" ծրագրի իրականացնողը,

նկատի ունենալով Հայաստանում աճող էներգետիկ աղքատության խնդիրը, հատկապես մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում,

հաշվի առնելով էներգախնայողության կարևորությունը կայուն զարգացման համար և մարզում իրականացվող կայուն զարգացմանը միտված այլ ծրագրերը,

գիտակցելով, որ այս գործընթացում կարևոր է պետական, մասնավոր և քաղաքացիական կազմակերպությունների ներուժի ամբողջական և լիարժեք ներգրավումը, այդ թվում թիրախավորված արդյունավետ համագործակցության հետագա զարգացմամբ,

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Լոռու մարզում իրականացվող համայնքների խոշորացման գործընթացները և դրա հետ կապված նոր մարտահրավերներն ու հնարավորությունները,

հավաստելով մարզի համայնքներում էներգետիկ արդյունավետության բարելավմանն ուղղված հանրային իրազեկման բարձրացման և համայնքային էներգախնայողության ծրագրերի իրականացմանը նպաստելու իրենց պատրաստակամությունը,

կարևորելով մարզի համայնքներում էներգետիկ աղքատության կրճատմանն ուղված իրականացվելիք բոլոր գործողությունների համակարգվածության անհրաժեշտությունը,

արտահայտելով էներգետիկ ոլորտում, էներգետիկ արդյունավետության բարելավման, մարզային համայնքների իրազեկման բարձրացման և էներգետիկ աղքատության կրճատման արդյունավետ համագործակցության փոխադարձ ձգտումները,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ:

1. *ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ*

ա.) Լոռու մարզպետարանն, ի դեմս մարզպետ Արթուր Նալբանդյանի (այսուհետ՝ Մարզպետարան), մի կողմից, և Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա հիմնադրամը, ի դեմս տնօրեն Արա Նազինյանի (այսուհետ՝ "ԱՍԲԱ"), մյուս կողմից արտահայտում են միմյանց հետ համագործակցելու պատրաստակամությունը և ձգտումները, մարզի համայնքների էներգետիկ արդյունավետության բարձրացման նպատակով, "ԱՍԲԱ"-ի կողմից իրականացվող "ԵՄ-ն քաղաքացիական

հասարակությանը. Էներգաարդյունավետությունը Հայաստանի համայնքներում" ծրագրի արդյունավետ իրականացման համար:

բ.) Կողմերը պայմանավորվում են համագործակցել սույն համաձայնագրով և դրա հիման վրա ընդունված այլ փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան, Կողմերի համար ընդունելի ձևաչափով մարզի համայնքներում էներգետիկ արդյունավետության բարելավմանն ուղղված, համաձայնագրում նշված նպատակների իրականացման համար՝ վերոհիշյալ ծրագրի շրջանակներում:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Աջակցություն "ԱՍԲԱ"-ին ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման գործում:
2. Ծրագրում Լոռու մարզի համայնքների ներգրավման աջակցություն:
3. Աջակցություն տեղական ՀԿ-ին և ԶԼՄ-ներին ծրագրի շրջանակներում նախատեսվող, էներգետիկ արդյունավետության բարելավման ուղղությամբ հանրային իրազեկման քարոզարշավներին:
4. Աջակցություն տեղական ՀԿ-ներին և ծրագրի պատասխանատուներին համայնքային էներգախնայողության ծրագրերի նախապատրաստման և իրականացմանը ընթացքում:
5. Աջակցություն "ԱՍԲԱ"-ին և գործընկեր կառույցներին մարզում իրականացվող նմանատիպ ծրագրերի հետ համագործակցության ձևավորմանը:
6. Մշտական փոխադարձ տեղեկատվության փոխանակում՝ ծրագրի իրականացման մասին:
7. Մարզում ծրագրի իրագործմանը վերաբերող տվյալների ձեռք բերելու աջակցություն՝ այդ թվում մարզի վերաբերյալ համապարփակ վիճակագրության տրամադրում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն համաձայնագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն համաձայնագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

4. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:
2. Սույն համաձայնագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն համաձայնագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է համաձայնագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն համաձայնագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն համաձայնագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն համաձայնագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:
2. Համաձայնագիրը համարվում է կնքված՝ լիազորված մարմնի ղեկավարի կողմից այն ստորագրելուց և հրապարակելուց հետո:
3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2(երկու) բնօրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լոռու Մարզպետարան	Ազգային Սոցիալական Բնակարանային Ասոցիացիա Հիմնադրամ
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պ.18 բ. 2
Լոռու մարզապետ՝	ԱՍԲԱ Հիմնադրամի գլխավոր տնօրեն՝
Արթուր Նալբանդյան	Արա Նազինյան